



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՊԵՏ

«19» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Ս. Անանյան

ԳԲԽ-31/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի 02.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 02.04.2016թ. ներկայացված բողոքով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի

կարիքների համար ֆինանսատնտեսական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.02.2016թ. հայտարարվել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի հայտարարության տեքստը հաստատված է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2016թ. թիվ 03 որոշմամբ:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

1. «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման համար ստեղծված գնահատող հանձնաժողովը (Ա.Պետրոսյան, տնօրենի գլխավոր տեղակալ (նախագահ), Շ. Ալեքսանյան, գլխավոր հաշվապահ, Շ. Գրիգորյան (ՆԻՎ գլխավոր մասնագետ, քարտուղար)) կազմով գումարել է նիստ և կազմել է թիվ 3 առ 04.03.2016թ. արձանագրությունը:

2. Ըստ վերը նշված արձանագրության՝

- 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն:

- 1.2 կետի համաձայն՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարով, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը:

- 1.3 կետի համաձայն՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնությունը, վճարման պահանջագիրը, աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիան: «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև հրավերով նախատեսված հավելված թիվ 5-ը, նախկինում կատարված աուդիտորական ծառայությունների երկու պայմանագրեր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ, ծառայությունների կատարողական ակտերը, հարկային հաշիվները:

- 1.4 կետի համաձայն՝ Ընթացակարգի հրավերի՝ ներկայացվել է փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

• 1.5 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է որ, համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի, մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում, իսկ միակ մասնակիցը՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ընդգրկված չէ Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում, որոշել է՝

✓ «ԵՐՋԷԿ ՊԸԾՁԲ 04/16» ծածկագրով «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների գնման մասնակցի հայտը համարել հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժել:

✓ «ԵՐՋԷԿ ՊԸԾՁԲ 04/16» ծածկագրով «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների գնման ընթացակարգը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի՝ հայտարարել չկայացած:

3. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի «Գնման առարկայի բնութագիրը» բաժնում նշված է.

«Գնման առարկա է հանդիսանում «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերումը 1 չափաբաժնով՝

Ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է նույն հրավերի N 6 հավելվածում:

Նույն հրավերով նախատեսված ծառայությունները համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.(աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա):

Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն նշել է, որ նման սահմանափակում սահմանված չէ «Լիցենզավորման մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ այլ օրենքներում և

դրանցից բխող այլ իրավական ակտերում: Ուստի ըստ Ընկերության մասնակցի մասնակցության իրավունքների այդ կերպ (նման) սահմանափակումը չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից, դեռ ավելին՝ այն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված որակավորման չափանիշներին, այն է՝

«Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից»,

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է, որ հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ընդ որում, հայտարարությունը ենթակա չէ փոփոխման: Եթե կիրառվում է նույն հոդվածի 2-րդ մասը, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է այդ սահմանափակման մասին:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն նշել է նաև, որ Ընթացակարգի մասնակիցների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ որևէ սահմանափակում չի նախատեսվել:

Ըստ Ընկերության, Ընթացակարգի հրավերում աուդիտորական ընկերության Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի

իրավասու անկախ աուդիտորների ցանկում ընդգրկված լինելու պահանջը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքից, չի ապահովում մրցակցության համար հավասար պայմաններ և համահունչ չէ գնման ձևի ընտրությանը:

Ընկերությունը տեղեկացրել է, որ «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի 04.03.2016թ. թիվ 3 որոշման արձանագրությունը «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ստացել է 14.03.2016թ.:

Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ նման խտրական հիմքով, մերժելով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը և դրանով իսկ դադարեցնելով Ընկերության՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունքը, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 15.03.2016թ. նույն գնման առարկայի, այն է՝ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների մատուցման ձեռքբերում» վերաբերյալ հայտարարել է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ 23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգը և Ընկերության ունեցած տեղեկությունների համաձայն նույն խտրական հիմքով կնքելու է աուդիտորական ծառայությունների ձեռքբերման պայմանագիր:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն որպես այլ հանգամանքներ և նկատառումներ նշել է հետևյալը.

- Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեությունը լիցենզավորված է, լիցենզիան տրվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անժամկետ, բարդ ընթացակարգով՝ աուդիտորական ընկերության աուդիտի որակավորում ունեցող աշխատակիցների աուդիտորական վկայականների հիման վրա,
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված աուդիտորները իրենց որակավորման ուժով և շնորհիվ տիրապետում են միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների (ՄՖՀՍ) ստանդարտներին,
- ՀՀ օրենսդրությամբ աուդիտորական ընկերությունները մրցակցային դաշտում իրավահավասար են,
- ՀՀ կառավարության 2010թ. Մարտի 11-ի 235-Ն որոշմամբ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները ամբողջությամբ կիրառվում են

Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով խոշոր ընկերությունը (խնդրո առարկա դեպքում «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ) պարտավոր է իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել վերոհիշյալ ստանդարտներին համապատասխան,

- «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակվող ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին համապատասխան,

- «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը և ընկերությունը աուդիտորական ծառայությունների ձեռքբերումը պետք է իրականացվի «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը՝

- 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

- 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

- 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար.

բ. մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում՝

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,

շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության...:

Այսպիսով, ըստ Ընկերության «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը կարող է սահմանվել միայն շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն նշել է, որ հրավերով ներկայացված պահանջը, որ «Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում» չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ և համահունչ չէ գնման ձևի ընտրությանը:

Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ 23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերում նույնպես դրվել է նույն խտրական պահանջը:

Բողոքաբերը վկայակոչել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- 1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,
- 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը, անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին: Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ու 2-րդ ենթակետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Այսպիսով, կարծում ենք, որ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգով մրցույթային հրավերի տեխնիկական բնութագրի պահանջը հակասում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ամրագրված սկզբունքներին, 5-րդ հոդվածի 4-րդ կետի, 6-րդ հոդվածի 1- 3-րդ կետերի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 23-րդ կետի պահանջներին, ուստի այդ հիմքերով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և դրա հետ կապված «ԵՐՋԷԿ ՊԸԾՁԲ 04/16» ծածկագրով աուդիտորական ծառայության ձեռքբերման գնահատման հանձնաժողովի 04.03.2016թ. թիվ 3 որոշման 2.1 և 2.2 կետերը ենթակա են դադարեցման: Միաժամանակ, նկատի ունենալով, որ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն պատշաճ հայտ է ներկայացրել «ԵՐՋԷԿ ՊԸԾՁԲ 04/16» ծածկագրով աուդիտորական ծառայությունների ձեռքբերման մրցույթին և եղել է մրցույթի միակ մասնակիցը, ուստի մրցույթի հաղթող պետք է ճանաչել «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ » ՍՊԸ-ն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածներով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն խնդրել է.

1. Դադարեցնել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի՝ մասնակցի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով 04.03.2016թ. թիվ 3 որոշումը:

2. «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի 04.03.2016թ. թիվ 3 որոշումը համարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի նշված կետերին հակասող և որպես հետևանք դադարեցնել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը և Ընթացակարգի հաղթող ճանաչել միակ մասնակցին՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին:

3. Որպես հետևանք ապօրինի հայտարարել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական

գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգը:

2. «Երևան Զերմաէլէկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Երևան Զերմաէլէկտրակենտրոն» ՓԲԸ-ն 11.04.2016թ. թիվ 207 գրությամբ հայտնել է, որ «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ն հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը (եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված է նույն օրենքով, ապա կիրառվում են այդ նորմերը), 2015թ. ապրիլի 8-ին «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի հետ ստորագրած համաձայնագիրի II-րդ բաժնի B կետի 3-րդ ենթակետը (Ծրագիրը իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա իր ֆինանսական հաշվետվությունները, որոնք աուդիտի են ենթարկված Համաշխարհային բանկի կողմից ընդունելի աուդիտորի կողմից), Համաշխարհային բանկի կողմից հաստատված ցանկը, որում Հայաստանի Հանրապետությունից ընդգրկված են վեց կազմակերպություններ, հայտարարել էր գնման պարզեցված ընթացակարգ «ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության» ձեռքբերման «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 04/16» ծածկագրով:

«Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ն, «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմելիս, առաջնորդվելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետով, համաձայն որի խոշոր կազմակերպությունների համար ֆինանսական աուդիտի անցկացումը պարտադիր չէ, ինչպես նաև «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետով, (Աուդիտն անցկացվում է օրենքով սահմանված դեպքերում (պարտադիր աուդիտ) կամ Աուդիտի ենթարկվող անձի նախաձեռնությամբ (կամավոր աուդիտ)). Ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր աուդիտն իրականացվում է աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Կամավոր աուդիտը կարող է իրականացվել այլ հիմունքներով (այլ ստանդարտներով և այլն), եթե աուդիտի արդյունքները նախատեսված են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գնտվող օգտագործողների համար»), գրել է, որ մասնակիցը պետք է

ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում:

«ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին), «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել է, քանի որ այդ ընկերությունը ներառված չէ համաշխարհային բանկի կողմից հաստատված ցանկում, և գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած, որի մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում:

Պատվիրատուն նշել է, որ ժամկետի սղությունից ելնելով՝ աուդիտորական ծառայությունների ձեռք բերման համար հայտարարվել է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23-16» գնման բանակցային ընթացակարգը, որը համաձայն Կարգի մեկ օրով հրապարակվել է տեղեկագրում: Հրավերը ուղարկվել է Համաշխարհային բանկի կողմից ընդունելի վեց կազմակերպություններին, որոնցից միայն մեկն է ներկայացրել հայտ:

Կենտրոնը 13.04.2016թ. թիվ 01/04.1/1470-16 գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ անհրաժեշտ է անհապաղ Կենտրոնին տրամադրել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» և «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրերով ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցների հայտերի, գնահատող հանձնաժողովների արձանագրությունների, ՓԲԸ-ի ու Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի հետ ստորագրված համաձայնագրի պատճենները:

«Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 14.04.2016թ. ներկայացրել է վերը նշված ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. ԳԲԽ-31/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-31/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին

մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի «Գնման առարկայի բնութագիրը» բաժնի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերումը 1 չափաբաժնով՝ ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է նույն հրավերի N 6 հավելվածում:

3. Հրավերով նախատեսված ծառայությունների համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝ աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա:

4. Հրավերի համաձայն՝ մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

5. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ունի ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա, սակայն ներառված չէ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի արձանագրության՝

- 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն:

- 1.2 կետի համաձայն՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարով, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Զբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը:

- 1.3 կետի համաձայն՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնությունը, վճարման պահանջագիրը, աուդիտորական

ծառայությունների իրականացման լիցենզիան: «Էլվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև հրավերով նախատեսված հավելված թիվ 5-ը, նախկինում կատարված աուդիտորական ծառայությունների երկու պայմանագրեր «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ, ծառայությունների կատարողական ակտերը, հարկային հաշիվները:

- 1.4 կետի համաձայն՝ Ընթացակարգի հրավերի՝ ներկայացվել է փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

- 1.5 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է որ, համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի, մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում, իսկ միակ մասնակիցը՝ «Էլվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ընդգրկված չէ Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում, որոշել է՝

✓ «ԵՐԶԷԿ ՊԸԾՁԲ 04/16» ծածկագրով «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների գնման մասնակցի հայտը համարել հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժել:

✓ «ԵՐԶԷԿ ՊԸԾՁԲ 04/16» ծածկագրով «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների գնման ընթացակարգը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, հայտարարել չկայացած:

7. «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐԶԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգը:

8. Վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի արձանագրության՝

- 1.1 կետի համաձայն՝ հայտ է ներկայացրել «Գրանթ Թորոնթոն Աուդիտ» ՍՊԸ-ն:

- 2.1 կետի համաձայն՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐԶԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգի

գնահատող հանձնաժողովը որոշել է «Գրանթ Թորոնթոն Աուդիտ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից:

4. ԳԲԽ-31/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի 02.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 11.04.2016թ. թիվ 207 և 14.04.2016թ. գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի և առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐԶԷԿ-ԲԸԱՀԾԶԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենք 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝

• 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա, այն է՝ **գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:**

• 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

• **խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:**

• **համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանա-

գիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

«Երևան Զերմաէլէկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի Հրավերի 1-ին մասի համաձայն՝

- մասնակիցը պետք է ունենա աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա,

- մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 04.03.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի արձանագրության 1.5 կետի համաձայն, որոշել է «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը համարել հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժել, քանզի համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի՝ մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում, իսկ միակ մասնակիցը ընդգրկված չէ Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում:

Այնուհետև «ԵՐԶԷԿ ՊԸԾԶԲ 04/16» ծածկագրով «Երևանի Զերմաէլէկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների գնման ընթացակարգը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, հայտարարվել է չկայացած:

Որից հետո «Երևանի Զերմաէլէկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐԶԷԿ-ԲԸԱՀԾԶԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգը:

Առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգի Հրավերի 1-ին մասի համաձայն ևս սահմանվել է, որ **մասնակիցը պետք է ունենա աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա և մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:**

Գտնում ենք, որ «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի և առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերների 1-ին մասով սահմանված այն պահանջը, որ մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում, չի բխում **պայմանագրով նախատեսված պարտավորությունների կադարման անհրաժեշտությունից**, հակասում է գնման գործընթացի մրցակցային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքներին, խտրական է, սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին և, սահմանելով վերը նշված պահանջը, Պատվիրատուն խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջները:

Այս կապակցությամբ Պատվիրատուն 11.04.2016թ. թիվ 207 գրությամբ հայտնել է, որ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում ընդգրկված լինելու պահանջը նախատեսված է «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև 2015թ. ապրիլի 8-ին կնքված ծրագրի համաձայնագրի II-րդ բաժնի «բ» կետի 3-րդ ենթակետով, և քանի որ «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև 2015թ. ապրիլի 8-ին կնքված համաձայնագիրը հանդիսանում է միջազգային պայմանագիր և Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված է նույն օրենքով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Պատվիրատուի այս պնդման կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

«Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև 2015թ. ապրիլի 8-ին կնքված ծրագրի համաձայնագրի և

Ընթացակարգի հրավերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հիշյալ համաձայնագրով նախատեսված չէ այնպիսի պահանջ, որը կպարտադրեր Պատվիրատուին **գնման առարկայի տվյալ բնութագրով** ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների գնման գործընթաց կազմակերպելիս սահմանել վերոհիշյալ պահանջը:

Միաժամանակ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չէ տվյալ գնումը՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով կազմակերպելու համար որևէ պատշաճ հիմնավորում:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգի Հրավերի 1-ին մասով ևս սահմանած է եղել այն պահանջը, **որ մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում**, որը հակասում է գնման գործընթացի մրցակցային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքներին, խտրական է, սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին և, սահմանելով վերը նշված պահանջը, Պատվիրատուն խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում ենք, որ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի պահանջը առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգն ապօրինի ճանաչելու մասին ենթակա է բավարարման՝ կնքված պայմանագրի պայմաններում:

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն 02.04.2016թ. ներկայացրած բողոքով պահանջել է, որպեսզի դադարեցվի «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 04.03.2016թ. թիվ 3 որոշումը:

Կենտրոնը արձանագրում է, որ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ վերջինս ընդգրկված չէ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների

ցանկում, մինչդեռ Պատվիրատուն, սահմանելով Հրավերի վերոհիշյալ պահանջը, ինչպես նշվեց վերևում, խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջները:

Սակայն նկատի ունենալով, որ «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի Հրավերի վերոհիշյալ պահանջը խտրական է, անհիմն կերպով բարդացրել է հնարավոր մասնակցությունը, ավելին, սահմանափակել է մրցակցությունը (վերոհիշյալ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից)՝ զրկելով Հրավերի վերոհիշյալ խտրական պահանջին չհամապատասխանող այլ մասնակիցներին մասնակցելու վերոհիշյալ Ընթացակարգին, և հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին)՝ «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգը արդեն իսկ հայտարարվել է չկայացած, ուստի գտնում ենք, որ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի պահանջը իր հայտը մերժելու մասին 04.03.2016թ. թիվ 3 որոշումը դադարեցնելու վերաբերյալ ենթակա է մերժման:

Անդրադառնալով բողոքով ներկայացված՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի Ընթացակարգում հաղթող ճանաչելու պահանջին՝ գտնում ենք, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորությամբ օժտված չէ, ուստի այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի 02.04.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի՝ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով 04.03.2016թ. թիվ 3 որոշումը դադարեցնելու պահանջը մերժել:

2. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ին «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-04/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչելու մասին պահանջը մերժել:

3. «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների

ձեռքբերման նպատակով հայտարարված առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու «ԵՐՋԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-23/16» ծածկագրով բանակցային ընթացակարգով կնքված պայմանագրի պայմաններում ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ. Այոնց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝



Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-31/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Լ. Հովակիմյան